



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՈՐՈՇՈՒՄ


” 12 ” մարտ 2011 թ.

թիվ 10-Ա

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ »
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

հաստատել «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարն անցկացնելու կազմակերպական պլանները կազմելու կարգի մասին» ցուցումները՝ համաձայն հավելվածի:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության
վիճակագրության պետական խորհրդի
2011 թվականի մարտի 12-ի թիվ 10-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության
2011 թվականի մարդահամար

Ց ՈՒ Ց ՈՒ Մ Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ
ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Մարդահամարի նախապատրաստական աշխատանքների հաջորդ՝ հերթական շրջափուլը քաղաքներում և խոշոր գյուղերում տների (շինությունների) ցուցակների (Ձև թիվ 1-քաղաքային), գյուղական վայրերում՝ գյուղական համայնքների (Ձև թիվ 2-գյուղական) համար կազմված ցուցակների, համապատասխան քարտեզագրական նյութերի, ինչպես նաև նախապես սահմանված աշխատանքային նորմաների հիման վրա Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի նախապատրաստման և անցկացման կազմակերպական պլանների կազմումն է:

2. Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարը ճիշտ կազմակերպելու և ընտրված տարածքում բնակչության հաշվառման ամբողջականությունն ապահովելու համար Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱՎԾ) մարզային գործակալությունները համապատասխան տարածքային ստորաբաժանումների հետ կազմում են մարդահամարն անցկացնելու կազմակերպական պլաններ:

3. Մարդահամարն անցկացնելու կազմակերպական պլանը (այսուհետ՝ կազմպլան) բաղկացած է հետևյալ բաժիններից՝

- 1) Մարդահամարային շրջանացում (Ձև 1Կ – Ձև 6Կ),
- 2) Մարդահամարային կադրերի պահանջարկ (Ձև 7Կ),
- 3) Մարդահամարային կադրերի ուսուցման (հրահանգավորման) և նրանց պատրաստվածության ստուգման ծրագիր (Ձև 8Կ),
- 4) Բնակչության շրջանում զանգվածային-բացատրական աշխատանքների կազմակերպման ծրագիր (Ձև 9Կ),
- 5) Բացատրագիր:

4. Մույն ցուցումներում օգտագործված հասկացությունները կիրառվում են միայն վիճակագրական նպատակներով:

ԲԱԺԻՆ I Մարդահամարային շրջանացում

1. Մարդահամարն անցկացնելու կազմակերպական պլանի հիմնական գործընթացը **մարդահամարային շրջանացումն է**, այսինքն՝ ընտրված տարածքների սահմանազատումը կազմակերպման առումով ավելի մատչելի և կառավարելի տեղամասերի, դրանք են՝ հաշվային, հրահանգչական և մարդահամարի տեղամասերը:

2. Տվյալ տարածքի սահմանազատումը հաշվային, հրահանգչական և մարդահամարի տեղամասերի հնարավորություն կտա ապահովելու քաղաքներում տների (շինությունների) և մարզերի գյուղական համայնքների ամբողջական ընդգրկումը մարդահամարի հաշվառմամբ և կբացառի կրկնակի հաշվառումը: Մարդահամարային շրջանացումն անհրաժեշտ է նաև մարդահամարի անցկացման ժամանակ մարդահամարային կադրերի պահանջարկը որոշելու և նրանց ըստ տեղամասերի ճիշտ տեղաբաշխելու համար:

3. Յուրաքանչյուր տարածաշրջանի կամ քաղաքի տարածքի բաժանումը մարդահամարի, հրահանգչական և հաշվային տեղամասերի պետք է կատարվի քաղաքում՝ տների (շինությունների) ցուցակների (**Ձև թիվ 1- քաղաքային**), գյուղական վայրերում՝ գյուղական համայնքների ցուցակների (**Ձև թիվ 2- գյուղական**), քաղաքի սխեմատիկ հատակագծի ու տարածաշրջանի քարտեզների, ինչպես նաև հյուրանոցների, հիվանդանոցների, առողջարանների և նմանատիպ այլ կազմակերպությունների/հիմնարկների (այսինքն՝ ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպությունների), մասնագիտացված տների (տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններ, մանկատներ, դպրոցներին կից գիշերօթիկներ և գիշերօթիկ դպրոցներ), օդանավակայանների (այսինքն՝ ուղևորների հավաքատեղերի) ցուցակների հիման վրա:

4. Մարդահամարային շրջանացման արդյունքներն անցկացվում են քաղաքի սխեմատիկ հատակագծի և տարածաշրջանի քարտեզի վրա:

5. Մարդահամարային շրջանացումն իրականացվում է ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունների պետերի կողմից՝ վիճակագրության համապատասխան տարածքային ստորաբաժանման պատասխանատու անձի, մարդահամարի անցկացման ժամանակ մարզերում մարդահամարի աշխատանքները համակարգողների անմիջական մասնակցությամբ:

6. Սկզբում որոշվում են **մարդահամարի տեղամասերի** տարածքներն ու սահմանները: Մարդահամարի ժամանակ ստեղծվելու են մարդահամարի տեղամասեր, որոնք ընդգրկվելու են մարզերը՝ քաղաքային և գյուղական համայնքներով:

Այնուհետև, **մարդահամարի տեղամասերը** պետք է բաժանել **հաշվային տեղամասերի**, իսկ հաշվային տեղամասերը միավորել **հրահանգչական տեղամասերի** մեջ:

7. Հաշվային տեղամասերը համարակալվում են հրահանգչական տեղամասի սահմաններում, հրահանգչական տեղամասերը՝ մարդահամարի տեղամասերի սահմաններում, մարդահամարի տեղամասերը՝ տարածաշրջանի/քաղաքի սահմաններում: Մասնագիտացված տներում (տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններ, մանկատներ, դպրոցներին կից գիշերօթիկներ և գիշերօթիկ դպրոցներ) և ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպություններում (հիվանդանոց, հյուրանոց և այլն) կազմավորված մարդահամարի, հրահանգչական կամ հաշվային տեղամասերը համարակալվում են համապատասխան **հիմնական տեղամասերից հետո:**

8. Մարդահամարային շրջանացման արդյունքները գրառվում են կազմալանի **Ձև 1Կ – Ձև 6Կ** ձևաթղթերում (կցվում է): Մարդահամարային շրջանացման ձևերի մեջ չեն մտցվում այն կազմակերպությունները, որոնցում մարդահամարն անցկացվում է **հատուկ կարգով:** Այդպիսի կազմակերպությունների ցուցակը նախօրոք համաձայնեցվում է համապատասխան մարմինների հետ:

9. Մարդահամարի, հրահանգչական և հաշվային տեղամասերի ընդհանուր քանակները յուրաքանչյուր տարածքի համար սահմանվում է ՀՀ ԱՎԾ կողմից, իսկ տեղերում դրանք բաշխվում են Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի կազմակերպչական և մեթոդաբանական հիմնական դրույթներով սահմանված մարդահամարի, հրահանգչական և հաշվային տեղամասերի համար սահմանված աշխատանքային նորմաների հիման վրա:

Քաղաքների մարդահամարային շրջանացում

10. Հաշվարարների, հրահանգիչ-հսկիչների աշխատանքային միջին նորմաները պետք է պահպանվեն ամբողջությամբ քաղաքի մասշտաբով, միաժամանակ, պետք է տարբերակվեն քաղաքի տարբեր տեղամասերում՝ կախված դրանց կառուցապատման բնույթից և շինությունների մեծությունից: Աշխատանքային միջին նորմաները պետք է բարձրացվեն այն տեղամասերում, որտեղ գերակշռում են բարձրահարկ շենքերը և կանոնավոր շինությունները և իջեցվեն այն տեղամասերում, որտեղ գերակշռում են մեծ տարածքի վրա ցրված մանր տներն ու շինությունները:

11. Քաղաքի տարածքը բաժանվում է մարդահամարի տեղամասերի, որոնցում բնակչության թվաքանակը չպետք է պակաս լինի տասնհինգ հազարից և չգերազանցի քսաներկու հազարը: Մարդահամարի տեղամասերը պետք է բաղկացած լինեն ամբողջական թաղամասերից (զանգվածներից): **Չի թույլատրվում** թաղամասերը (զանգվածները) բաժանել մարդահամարի տարբեր տեղամասերի միջև:

12. Մարդահամարի տեղամասի տարածքը բաժանվում է հաշվային տեղամասերի: Կախված հաշվարարի համար սահմանված աշխատանքային միջին նորմայից և տարածքի կառուցապատման բնույթից՝ հաշվային տեղամասը կարող է բաղկացած լինել՝ շենքի մի մասից, մեկ շենքից, մեկ շենքից և մոտակա շենքի մի մասից, մեկ թաղամասի (զանգվածի) սահմաններում գտնվող մի քանի շենքերից, մեկ թաղամասից և նրան սահմանակից մյուս թաղամասի մասից, մի քանի սահմանակից թաղամասերից (զանգվածներից):

13. **Չի թույլատրվում բաժանել** այն տունը (շենքը, թաղամասը, զանգվածը), որի բնակչությունը չի գերազանցում հաշվարարի առավելագույն ծանրաբեռնվածությունը (չորս հարյուր հիսուն մարդ): Տարբեր թաղամասերի (զանգվածների), տների (շենքերի) մասերից հաշվային տեղամասեր կազմել **չի թույլատրվում**: Հաշվային տեղամասերն ըստ փողոցների կազմավորվում են միայն այն քաղաքներում, բնակավայրերում կամ քաղաքների մասերում, որոնք բաղկացած են մեկ փողոցից կամ մի քանի զուգահեռ փողոցներից և այդ պատճառով էլ տների ցուցակները՝ **Ձև թիվ 1-քաղաքային** նույնպես կազմվում են ըստ փողոցների:

14. Հաշվային տեղամասերը միավորվում են **հրահանգչական տեղամասերի** մեջ, որոնցում, որպես կանոն, ներառվում են ամբողջությամբ մեկ կամ մի քանի սահմանակից թաղամասեր (զանգվածներ): **Չի թույլատրվում** մեկ հրահանգչական տեղամասի մեջ միավորել տարբեր թաղամասերի (զանգվածների) մասեր: Խորհուրդ չի տրվում բաժանել այն թաղամասերը (զանգվածները), որոնց բնակչությունը չի գերազանցում հրահանգիչ-հսկիչի առավելագույն ծանրաբեռնվածությունը՝ երկու հազար մարդ: Չի թույլատրվում մեկ հրահանգչական տեղամասի մեջ այնպիսի թաղամասեր (զանգվածներ) մտցնել, որոնք մեկը մյուսից բաժանված են երկաթուղով կամ գետով:

15. Եթե քաղաքային համայնքն իր ենթակայության ներքո ունի գյուղ(եր), ապա դրան(ց)ում, կախված բնակչության թվաքանակից, ստեղծվում են հրահանգչական և հաշվային տեղամասեր, որոնք ներառվում են տվյալ քաղաքի մարդահամարի տեղամասի կազմի մեջ: Քաղաքի և գյուղական բնակավայրի տները մեկ հաշվային տեղամասի մեջ միավորել **չի թույլատրվում**:

16. Քաղաքի մարդահամարային շրջանացման հանրագումարները գրառվում են կազմալանի **Ձև 1Կ– Ձև 3Կ** ձևաթղթերում: Մարդահամարային շրջանացման արդյունքներն անցկացվում են քաղաքի սխեմատիկ հատակագծի վրա: Հատակագծի վրա տարբեր գույներով պայմանանշվում են մարդահամարի, հրահանգչական և հաշվային տեղամասերի սահմանները՝ նշելով դրանց համարներն (համարիչում) ու բնակչության թվաքանակը (հայտարարում), օրինակ՝ մեկ/երեք հարյուր հիսուն (1/350):

Գյուղական վայրերի մարդահամարային շրջանացում.

17. Գյուղական վայրերի մարդահամարի տեղամասում բնակչության թվաքանակը չպետք է գերազանցի տասնյոթ հազարից և պետք է ներառի միայն ամբողջական գյուղական համայնքներ:

18. Առանձին հաշվային տեղամասերի է բաժանվում այն գյուղական բնակավայրը կամ գյուղական համայնքի տարածքը, որում բնակչության թվաքանակը գերազանցում է հաշվարարի առավելագույն աշխատանքային նորման (երեք հարյուր քսան մարդ): Հաշվային տեղամասը կարող է կազմված լինել՝ բնակավայրի մի մասից, ամբողջ բնակավայրից, մի քանի բնակավայրերից, մեկ բնակավայրից և մոտակա բնակավայրի մի մասից:

19. Տարբեր գյուղական համայնքների կամ բնակավայրերի մասերից հաշվային տեղամասեր կազմավորել **չի թույլատրվում**:

20. Հաշվային տեղամասերը միավորվում են հրահանգչական տեղամասի մեջ, որն ընդգրկում է մեկ կամ մի քանի հարակից համայնքներ: Եթե գյուղական համայնքի բնակչության թվաքանակը չի գերազանցում հրահանգիչ-հսկիչի առավելագույն ծանրաբեռնվածությունը (հազար ութ հարյուր մարդ), ապա այդպիսի բնակավայրում կազմավորվում է մեկ հրահանգչական տեղամաս:

21. Գյուղական վայրի մարդահամարային շրջանացման հանրագումարները լրացվում են կազմալանի **Ձև 4 Կ** և **Ձև 5 Կ** ձևերում:

22. Քաղաքային համայնքի կազմում առկա գյուղ(եր)ում կազմավորված հրահանգչական կամ հաշվային տեղամասերի համար կազմվում են **Ձև 4 Կ** և **Ձև 5 Կ** ձևաթղթերը:

23. Մարդահամարային շրջանացման արդյունքներն անցկացվում են տարածաշրջանի քարտեզի վրա: Քարտեզի վրա տարբեր գույներով պայմանանշվում են մարդահամարի, հրահանգչական և հաշվային տեղամասերի սահմանները՝ նշելով դրանց համարներն ու բնակչության թվաքանակը:

Մարդահամարի և հրահանգչական խառը տեղամասերի կազմակերպումը

24. Առանձին դեպքերում թույլատրվում է ստեղծել մարդահամարի և հրահանգչական խառը տեղամասեր, այսինքն՝ քաղաքային մարդահամարի (հրահանգչական) տեղամասի կազմում ներառել գյուղական վայրի հրահանգչական (հաշվային) տեղամասեր և հակառակը: Մարդահամարի և հրահանգչական խառը տեղամասեր ստեղծվում են այն դեպքերում, երբ այդ տեղամասերը գտնվում են գյուղական մարդահամարի տեղամասի կենտրոնից

զգալի հեռավորության վրա և ավելի մոտ են գտնվում քաղաքին, կամ առկա են առանձին ոչ մեծ քաղաքներ, որոնցում ինքնուրույն մարդահամարի տեղամասեր չեն կազմավորվում: Արգելվում է քաղաքային և գյուղական բնակավայրերի տները միավորել մեկ հաշվային տեղամասում:

25. Քաղաքային մարդահամարի տեղամասի կազմի մեջ ներառված գյուղական վայրի հրահանգչական կամ հաշվային տեղամասերի համար կազմվում է Ձև 4Կ, Ձև 5Կ ձևաթղթերը՝ նշելով այն քաղաքային տեղամասերի համարները, որոնց կազմի մեջ դրանք մտցվել են:

26. Գյուղական մարդահամարի տեղամասի կազմի մեջ ներառված քաղաքային հրահանգչական կամ հաշվային տեղամասերի համար կազմվում են 1Կ, 2Կ և 3Կ ձևաթղթերը՝ նշելով այն գյուղական տեղամասերի համարները, որոնց կազմի մեջ դրանք ներառվել են:

27. Նմանատիպ հրահանգչական կամ հաշվային տեղամասերի համար կազմված մարդահամարային շրջանացման բոլոր ձևերը կցվում են այն մարդահամարի տեղամասի նյութերին, որի կազմի մեջ դրանք ներառված են:

Մարդահամարի տեղամասերի կազմակերպումը մասնագիտացված տներում (տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններ, մանկատներ, դպրոցներին կից գիշերօթիկներ և գիշերօթիկ դպրոցներ) և ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպություններում, ուղևորների հավաքատեղում

28. Հիմնական մարդահամարի տեղամասերից բացի կատարվում է նաև մարդահամարի տեղամասերի անհրաժեշտ քանակի հաշվարկ՝

- 1) մասնագիտացված տներում (տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններ, մանկատներ, դպրոցներին կից գիշերօթիկներ և գիշերօթիկ դպրոցներ),
- 2) ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպություններում (հյուրանոցներում, տուրիստական բազաներում, առողջարաններում հիվանդանոցներում և այլն),
- 3) ուղևորների հավաքատեղերում՝ օդանավակայաններում:

29. Վերոնշյալ կազմակերպությունների վերաբերյալ տեղեկությունները լրացվում են կազմալանի Ձև 6Կ-ձևաթղթում՝ սկզբում քաղաքների համար, այնուհետև գյուղական վայրերի, իսկ ցուցակի վերջում հաշվարկվում է հանրագումարն՝ ըստ տարածքի:

30. Ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպություններում մարդահամարն անց է կացվում հոկտեմբերի 12-ին՝ մարդահամարի առաջին օրվա ընթացքում:

31. Տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններում, մանկատներում, դպրոցներին կից գիշերօթիկներում և գիշերօթիկ դպրոցներում, որտեղ բնակչությունը հիմնականում բնակվում է մշտապես, մարդահամարն անց է կացվում ընդհանուր կարգով՝ հոկտեմբերի 21-30-ն ընկած ժամանակահատվածում՝ կախված դրանցում առկա բնակչության թվաքանակից:

32. Ուղևորների հավաքատեղում մարդահամարն անցկացվում է հոկտեմբերի 11-ի լույս 12-ի գիշերը:

33. Ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպություններում և օդանավակայաններում, որտեղ մարդահամարն անցկացվում է մեկ (առաջին) օրվա (գիշերվա) ընթացքում, հաշվարարի աշխատանքային միջին նորման կազմում է երեսուն մարդ/օր (գիշեր): Եթե վերոհիշյալ կազմակերպություններում բնակվողների թվաքանակը կամ տեղերի քանակը երեսունից պակաս է, ապա այդ կազմակերպություններում մարդահամարի անցկացումը հանձնարարվում է այն տեղամասի հաշվարարին, որի տարածքում գտնվում է տվյալ կազմակերպությունը: Այն կազմակերպություններում, որոնցում բնակվողների թվաքանակը կամ տեղերի քանակը երեսուն և ավելի է, կազմակերպվում են ինքնուրույն հաշվային տեղամասեր: Հինգ հաշվային տեղամասերի առկայության դեպքում կազմավորվում է մեկ հրահանգչական տեղամաս, իսկ հինգ հրահանգչական տեղամասերի առկայության պայմաններում՝ մեկ մարդահամարի տեղամաս:

34. Ձև 6Կ ձևաթղթում անհրաժեշտ է գրառել տվյալ տարածաշրջանում /քաղաքում առկա մասնագիտացված տները (տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններ, մանկատներ, դպրոցներին կից գիշերօթիկներ և գիշերօթիկ դպրոցներ) և ժամանակավոր կացատեղ հանդիսացող բոլոր կազմակերպությունները, ինչպես նաև առանձին բնակելի շենքում, որպես հյուրանոց, հարմարեցված բնակարանները:

*

* * *

35. Կազմալանով հաշվառված բնակչության ընդհանուր թվաքանակը ստացվում է Ձև 3Կ ձևաթղթի 5-րդ սյունակի, Ձև 5Կ և Ձև 6Կ ձևաթղթերի 4-րդ սյունակների հանրագումարից: Ստացված արդյունքները համեմատվում են տների ցուցակների, գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակների հիման վրա ստացված հանրագումարների հետ: Տների ցուցակների, գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակների ստուգումից հետո կազմալանի ձևաթղթերում և քարտեզագրական նյութերում պետք է մտցնել համապատասխան փոփոխություններ և ճշտումներ:

ԲԱԺԻՆ II Մարդահամարային կադրերի պահանջարկ

1. ՀՀ մարզերում (տարածաշրջաններում) մարդահամարի ժամանակավոր աշխատողներ են հանդիսանում՝ ՀՀ ԱՎԾ մարզային և Երևան քաղաքի գործակալություններում մարդահամարի աշխատանքները համակարգողները, մարդահամարի տեղամասերի վարիչները, մարդահամարի տեղամասերի վարիչների օգնականները, հրահանգիչ-հսկիչները և հաշվարարները:

2. Մարդահամարի անցկացմանը նպատակահարմար է ներգրավել այն անձանց, ովքեր կարող են ապահովել մարդահամարի անհրաժեշտ նախապատրաստումն ու հաջող անցկացումը: Մարդահամարային կադրերը հավաքագրվում են բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսներից, դպրոցների ուսուցիչներից, մանկապարտեզի դաստիարակներից, ուսանողներից, ինչպես նաև չաշխատող բնակչությունից: Նպատակահարմար է առավելություն տալ նախորդ մարդահամարների և հետազոտությունների անցկացման փորձ ունեցող անձանց:

3. Գյուղական համայնքներում ցանկալի է հաշվարարներին և հրահանգիչ-հսկիչներին հավաքագրել տվյալ կամ հարևան գյուղի բնակիչներից: Մասնագիտացված տներում (տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններ, մանկատներ, դպրոցներին կից գիշերօթիկներ և գիշերօթիկ դպրոցներ) և ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպություններում, որոնցում կազմակերպվում են մարդահամարի, հրահանգչական և հաշվային տեղամասեր՝ մարդահամարային կադրերն առաջադրվում են նույն կազմակերպությունների վարչակազմի կողմից:

4. Մարդահամարային կադրերի հավաքագրումը կատարվում է հետևյալ ժամկետներում՝

- 1) ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային և Երևան քաղաքի գործակալություններում մարդահամարի աշխատանքները համակարգողներ՝ 10 ամիս ժամկետով,
- 2) Մարդահամարի տեղամասերի վարիչներ և նրանց օգնականներ՝ 2.5 ամիս ժամկետով,
- 3) Հրահանգիչ-հսկիչներ՝ 1.5 ամիս ժամկետով,
- 4) Հաշվարարներ՝ 1 ամիս ժամկետով:

5. Մարդահամարային կադրերի ընդհանուր թվաքանակը որոշվում է ելնելով հիմնական հաշվային տեղամասերի, մասնագիտացված տներում (տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններ, մանկատներ, դպրոցներին կից գիշերօթիկներ և գիշերօթիկ դպրոցներ) և ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպություններում կազմակերպված տեղամասերի քանակից և դրանց ռեզերվից: Հաշվարարների ամբողջ ռեզերվը պետք է կազմի հաշվարարների

հիմնական անձնակազմի հինգ տոկոսը: Հրահանգիչ-հսկիչների ռեզերվը պետք է կազմի մեկ մարդ՝ յուրաքանչյուր մարդահամարի տեղամասի համար:

6. Մարդահամարի ժամանակ վճարվող ռեզերվային հաշվարարները պետք է հերթապահեն մարդահամարի, հրահանգչական տեղամասերում, կամ ՀՀ ԱՎԾ տարածքային բաժիններում, տեղամասերում և կատարեն իրենց հանձնարարված աշխատանքները: Հաշվարարներից որևէ մեկի բացակայության դեպքում անհրաժեշտ է նրան փոխարինել ռեզերվային հաշվարարով:

7. Մարդահամարային կադրերի պահանջարկի վերաբերյալ տեղեկությունները գրառվում են կազմալսանի **Ձև 7Կ** ձևաթղթում:

ԲԱԺԻՆ III Մարդահամարային կադրերի ուսուցման (հրահանգավորման) և նրանց պատրաստվածության ստուգման պլան

1. ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային գործակալությունների ղեկավարներին համապատասխան տարածքային պատասխանատու անձանց մարդահամարի հարցերով համակարգողների, մարդահամարի տեղամասերի վարիչների և նրանց օգնականների մարդահամարի հարցերով ուսուցումն անցկացվում է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից: Հրահանգիչ-հսկիչների ուսուցումն անցկացվում է մարզային գործակալության ղեկավարի անձնակազմի կողմից, հաշվարարներին՝ մարդահամարի տեղամասերի վարիչների և նրանց օգնականների կողմից՝ համապատասխան տեղամասերի հրահանգիչ-հսկիչների մասնակցությամբ: Հիմնական անձնակազմի հետ մեկտեղ ուսուցմանը ներգրավվում է նաև վճարվող ռեզերվը:

2. Մարդահամարային կադրերի ուսուցման ընթացքում պարտադիր կերպով կատարվում է մարդահամարի հարցաթերթի և այլ փաստաթղթերի փորձնական լրացում, որից հետո իրականացվում է նրանց պատրաստվածության ստուգում:

3. Մարդահամարի փաստաթղթերի լրացման կարգը չյուրացրած անձանց չի թույլատրվում մասնակցելու մարդահամարի անցկացման աշխատանքներին, նրանց պետք է փոխարինել կամ վերապատրաստել:

4. Մասնագիտացված տներում (տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններ, մանկատներ, դպրոցներին կից գիշերօթիկներ և գիշերօթիկ դպրոցներ) և ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպությունների մարդահամարային անձնակազմի ուսուցումն անցկացվում է հիմնական անձնակազմից առանձին, բայց եթե նրանց թվաքանակը շատ չէ՝ կարելի է միացնել հիմնական անձնակազմի խմբերին: Քաղաքների և գյուղական վայրերի համար հավաքագրված մարդահամարային անձնակազմի ուսուցումն անցկացվում է առանձին խմբերով, որպես կանոն, **25 մարդուց ոչ ավելի**:

5. Մարդահամարն անցկացնող կադրերի տեղաբաշխումն ըստ տեղամասերի կատարվում է հրահանգավորումից և գիտելիքների ստուգումից հետո (ավելի լավ պատրաստվածներին՝ հանձնարարվում են ավելի դժվար տեղամասեր) և ավարտվում է մինչև տների (շինությունների) նախնական շրջագայությունն սկսելը:

6. Մարդահամարային կադրերի ուսուցման ծրագիրը լրացվում է կազմալանի **Ձև 8Կ** ձևաթղթում:

ԲԱԺԻՆ IV *Ձանգվածային - բացատրական աշխատանքների ծրագիր*

Մարդահամարի անցկացումը պահանջում է բնակչության շրջանում լայն բացատրական աշխատանք՝ մարդահամարի նպատակների, խնդիրների, անցկացման կարգի և ժամկետների մասին, որը նպատակային դարձնելու համար անհրաժեշտ է կազմել **հատուկ ծրագիր** (համաձայն Ձև 9Կ-ի): Այն պետք է ներառի տարածաշրջանի/քաղաքի բնակչության շրջանում իրականացվելիք միջոցառումները՝ մարդահամարի նպատակների և խնդիրների, դրա անցկացման կարգի, ժամկետների, մարդահամարի աշխատողների և քաղաքացիների պարտականությունների պարզաբանման ուղղությամբ: Ծրագրում անհրաժեշտ է նախատեսել տեղական մամուլի, ռադիոյի և հեռուստատեսությունների օգտագործումը՝ մարդահամարի նպատակների, դրա ծրագրի և անցկացման կարգի, ինչպես նաև մարդահամարի նախապատրաստական աշխատանքների կատարման ընթացքը լուսաբանելու համար: Հարկավոր է նախատեսել նաև մարդահամարի խնդիրների և նպատակների մասին զեկույցների, զրույցների, սեմինարների անցկացում գործող կազմակերպություններում, ինչպես նաև զանգվածային-բացատրական աշխատանքների իրականացման հնարավոր այլ ձևեր:

ԲԱԺԻՆ V *Բացատրագիր*

Լրացված կազմալանին կցվում է բացատրագիր, որտեղ պարզաբանումներ են տրվում նախապատրաստական աշխատանքների կատարման, մարզում (տարածաշրջանում) մարդահամարային շրջանացման առանձնահատկությունների, կազմալանի ձևերի մասին և տրվում է հիմնավորում մարդահամարային անձնակազմի սահմանված աշխատանքային նորմաների վերաբերյալ: Պետք է հիմնավորել բնակեցման, կառուցապատման և այլ առանձնահատկությունների հետևանքով ծանրաբեռնվածության նորմաների իջեցման և առավելագույն ծանրաբեռնվածության գերազանցման դեպքերը: Անհրաժեշտ է ցույց տալ նաև նախատեսվող մարդահամարային կադրերի

բնութագիրը՝ նշելով նրանց ներգրավման հիմնական աղբյուրները (ուսանողներ, ուսուցիչներ, դասախոսներ, չաշխատող անձինք և այլն):

Կազմակերպական պլանը բնութագրող ձևաթղթերի լրացման կարգը և դրանց փոխկապակցվածությունը

1. «Քաղաքների հրահանգչական և հաշվային տեղամասերի կազմը»՝ **Ձև 1Կ**, լրացվում է քաղաքներում յուրաքանչյուր հրահանգչական տեղամասի համար՝ գրառելով յուրաքանչյուր հաշվային տեղամասի կազմը: Տների (շինությունների) գրառումն ըստ թաղամասերի, հնարավորության սահմաններում, պետք է համապատասխանեցնել տվյալ թաղամասի (զանգվածի) համար լրացված **Ձև թիվ 1 քաղաքային Աղյուսակ 1-ի** կատարված գրառմանը, որպեսզի դուրին լինի ձևաթղթերի համեմատումը: Հաշվային տեղամասի վերջին տան գրառումից հետո հաշվարկվում է ամբողջ տեղամասի հանրագումարն՝ ըստ 4-րդ (հաշվային տեղամասում տների քանակը) և 6-8-րդ սյունակների (բնակելի և ոչ բնակելի շինությունների, բնակարանների քանակը և բնակչության թվաքանակը): 9-րդ սյունակում գրառվում է հիմնական հաշվային տեղամասի տարածքում ներառված մասնագիտացված տան (տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններ, մանկատներ, դպրոցների կից գիշերօթիկներ և գիշերօթիկ դպրոցներ) և ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպության անվանումը և դրանցում առկա տեղերի (մահճակալների) քանակը: Աճողական կարգով բոլոր հաշվային տեղամասերի վերաբերյալ գրանցումները կատարելուց հետո՝ հաշվարկվում և գրառվում է հրահանգչական տեղամասի հանրագումարը:

2. Մասնագիտացված տներում (տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններ, մանկատներ, դպրոցների կից գիշերօթիկներ և գիշերօթիկ դպրոցներ) և ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպություններում ստեղծված հաշվային տեղամասերը գրվում են հիմնական հաշվային տեղամասերի հանրագումարից հետո:

3. «Քաղաքների մարդահամարի տեղամասի կազմը»՝ **Ձև 2 Կ**, կազմվում է հրահանգչական տեղամասի **Ձև 1Կ-ի** հիման վրա:

Յուրաքանչյուր հրահանգչական տեղամասի վերաբերյալ տվյալները լրացվում են առանձին տողով: 1-ին սյունակում նշվում է հրահանգչական տեղամասի համարը, 2-րդ սյունակում՝ հրահանգիչ-հսկիչի ազգանունը, 3-րդ սյունակում նշվում է թաղամասի (զանգվածի) համարը **Ձև 1Կ** ձևաթղթի 3-րդ սյունակից: 4-8-րդ սյունակներում համապատասխան տվյալները փոխանցվում են **Ձև 1Կ** ձևաթղթից, 9-րդ սյունակում՝ միջին հաշվով մեկ հաշվային տեղամասի բնակչության թվաքանակը, իսկ 10-րդ սյունակում նշվում է մասնագիտացված տան (տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններ, մանկատներ, դպրոցներին կից գիշերօթիկներ և

գիշերօթիկ դպրոցներ) և ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպության անվանումը և դրանցում առկա տեղերի քանակը: Բոլոր հիմնական հրահանգչական տեղամասերը գրանցելուց հետո հաշվարկվում և գրառվում է մարդահամարի տեղամասի հանրագումարը:

4. Մասնագիտացված տներում (տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններ, մանկատներ, դպրոցներին կից գիշերօթիկներ և գիշերօթիկ դպրոցներ) և ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպություններում ստեղծված հրահանգչական և հաշվային տեղամասերը լրացվում են հիմնական հրահանգչական տեղամասերից հետո՝ նշելով կազմակերպության հասցեն և անվանումը, իսկ դրանց վերաբերյալ տվյալները՝ համապատասխան սյունակներում:

5. Բոլոր հրահանգչական տեղամասերի գրառումից հետո (ինչպես հիմնական, այնպես էլ կազմակերպություններում ստեղծված) հաշվարկվում է հանրագումարն ամբողջությամբ՝ ըստ մարդահամարի տեղամասի՝ ըստ 1-ին, 4-8-րդ և 10-րդ սյունակների:

6. Եթե մարդահամարի տեղամասի կազմում ներառվել են գյուղական վայրի հրահանգչական և հաշվային տեղամասեր, ապա բոլոր հրահանգչական տեղամասերի (հիմնական և կազմակերպություններում ստեղծված) վերաբերյալ ցուցանիշների գրառումից հետո գրառվում են նաև այդպիսի տեղամասերը՝ 3-րդ սյունակում նշելով համայնքի կամ գյուղի անվանումը և լրացվում են 7, 8 և 10-րդ սյունակները:

7. «Քաղաքների մարդահամարային շրջանացում»՝ **Ձև 3Կ**, լրացվում է մարդահամարի տեղամասի համար՝ **Ձև 2Կ** -ի հիման վրա: 1-ին սյունակում դրվում է մարդահամարի տեղամասի համարը, 2-7-րդ սյունակներում փոխանցվում են **Ձև 2Կ** տվյալները, իսկ 8-12-րդ սյունակների տվյալները հաշվարկվում են: 13-րդ և 14-րդ սյունակները լրացվում են խառը մարդահամարի տեղամասերի համար: 13-րդ սյունակում նշվում է գյուղական մարդահամարի տեղամասի կազմի մեջ մտած քաղաքային հրահանգչական և հաշվային տեղամասերի համարները, իսկ 14-րդ սյունակում՝ դրանց քանակը:

8. «Գյուղական վայրի մարդահամարի, հրահանգչական և հաշվային տեղամասերի կազմը»՝ **Ձև 4Կ**, լրացվում է մարզի (տարածաշրջանի) գյուղական վայրերում ստեղծված մարդահամարի տեղամասի համար՝ նշելով դրանց կազմի մեջ մտնող յուրաքանչյուր հրահանգչական և հաշվային տեղամաս: 3-րդ սյունակում նշվում է հիմնական բնակավայրի հերթական համարը՝ հրահանգչական տեղամասի սահմաններում և դրա անվանումը: Եթե հիմնական բնակավայրն իր ենթակայության տակ ունի այլ բնակատեղեր կամ բնակավայրի հիմնական տներից (շինություններից) մեծ հեռավորության վրա գտնվող տներ (շինություններ), ապա հաջորդ տողով գրվում է դրանց հերթական համարը՝ հիմնական բնակավայրի սահմանում և անվանումը: 4-րդ սյունակում գրվում է հիմնական բնակավայրի և դրանում առկա այլ բնակատեղերի բնակչության

թվաքանակը: 5-րդ սյունակում գրվում է յուրաքանչյուր բնակավայրի համար ստեղծված հաշվային տեղամաս(եր)ի համարը: 6-րդ սյունակում գրվում է բնակչության թվաքանակը: Եթե բնակավայրը բաժանված է երկու և ավելի հաշվային տեղամասերի, ապա 3-րդ սյունակում կատարվում է «Գյուղի մի մասը» գրառումը, իսկ 5-րդ և 6-րդ սյունակներում համապատասխանաբար, յուրաքանչյուր հաշվային տեղամասի համարը և բնակավայրի այդ մասի բնակչության թվաքանակը: 7-րդ սյունակում նշվում է այն մասնագիտացված տան և ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպության անվանումը, որոնցում ինքնուրույն հաշվային տեղամասեր չեն ստեղծվում:

9. Վերջին հաշվային տեղամասի գրառումից հետո հաշվարկվում է հրահանգչական տեղամասի հանրագումարն ամբողջությամբ, իսկ վերջին հրահանգչական տեղամասի գրառումից հետո՝ մարդահամարի տեղամասի հանրագումարը:

Մասնագիտացված տներում (տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններ, մանկատներ, դպրոցներին կից գիշերօթիկներ և գիշերօթիկ դպրոցներ) և ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպություններում ստեղծված հաշվային (հրահանգչական) տեղամասերը գրառվում են հիմնական հաշվային (հրահանգչական) տեղամասերից հետո: Եթե տվյալ կազմակերպություններում բնակվում է մշտական բնակչություն, ապա նրանց թվաքանակը նշվում է 6-րդ սյունակում:

10. Եթե մարդահամարի տեղամասի կազմի մեջ ներառվել են քաղաքների հրահանգչական և հաշվային տեղամասեր, ապա բոլոր հրահանգչական տեղամասերի (հիմնական և կազմակերպություններում ստեղծված) վերաբերյալ գրառումներից հետո գրվում է յուրաքանչյուր այդպիսի տեղամասի ցուցանիշները, նշելով դրա անվանումը և հրահանգչական ու հաշվային տեղամասերի քանակը, ինչպես նաև լրացվում է 5-7-րդ սյունակները:

11. «Գյուղական վայրերի մարդահամարային շրջանացում»՝ **Ձև 5Կ**, լրացվում է **Ձև 4Կ** ձևաթղթի հիման վրա՝ ըստ յուրաքանչյուր մարդահամարի տեղամասի: Առանձին տողով գրառվում են յուրաքանչյուր մարդահամարի տեղամասի վերաբերյալ տվյալները:

12. Եթե գյուղական բնակավայրում կազմավորվել են միայն հրահանգչական (հաշվային) տեղամասեր, ապա 1-ին և 4-րդ սյունակներում գծիկներ են դրվում: 10-րդ և 11-րդ սյունակներում ցույց են տրվում մարդահամարի խառը տեղամասերի վերաբերյալ տվյալները: 10-րդ սյունակում՝ քաղաքների մարդահամարի և հրահանգչական տեղամասերի կազմի մեջ մտցված գյուղական բնակավայրի տեղամասերի համարները, իսկ 11-րդ սյունակում՝ հրահանգչական և հաշվային տեղամասերի քանակը:

13. «Մասնագիտացված տների (տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններ, մանկատներ, դպրոցներին

կից գիշերօթիկներ և գիշերօթիկ դպրոցներ) և ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպությունների ցուցակ»՝ **Ձև 6Կ** ձևաթղթում այդպիսի կազմակերպությունների գրառումը տարվում է, սկզբում ըստ քաղաքների, իսկ այնուհետև՝ ըստ գյուղական վայրերի: 6-8-րդ սյունակներում ցույց են տրվում մարդահամարի, հրահանգչական և հաշվային տեղամասերի համարները, ինչպես վերը նշված կազմակերպություններում ստեղծված, այնպես էլ այն հիմնական տեղամասերի, որոնց կազմի մեջ դրանք ներառվել են:

14. Բոլոր կազմակերպությունների վերաբերյալ տվյալների գրառումից հետո կատարվում է հանրագումարն ըստ տարածքի՝ քաղաքների և գյուղական վայրերի համար առանձին 4-5-րդ սյունակներում:

15. Անհրաժեշտ է ստուգել մտցվել են արդյո՞ք **Ձև 1Կ-Ձև 4Կ** ձևաթղթերում գրանցված բոլոր կազմակերպությունների վերաբերյալ տվյալները **Ձև 6Կ**-ի համապատասխան հաշվային, հրահանգչական և մարդահամարի տեղամասերի կազմում:

16. «Մարդահամարային կադրերի պահանջարկը»՝ **Ձև 7Կ** ձևաթուղթը լրացվում է կազմալանի **Ձև 3Կ, Ձև 5Կ և Ձև 6Կ** ձևաթղթերի հիման վրա: Սկզբում լրացվում են քաղաքների, այնուհետև գուղական վայրերի վերաբերյալ տեղեկությունները: Այս ձևում առանձին տողով լրացվում է յուրաքանչյուր քաղաքի, իսկ գյուղական բնակավայրում յուրաքանչյուր մարդահամարի տեղամասի վերաբերյալ տվյալները:

17. «Հրահանգիչ-հսկիչների և հաշվարարների (ներառյալ ռեզերվը (պահուստը)) ուսուցման (հրահանգավորման) և նրանց պատրաստվածության ստուգման պլան»՝ **Ձև 8Կ** ձևաթուղթը, լրացվում է **Ձև 7Կ** -ի հիման վրա: Այս ձևում մարդահամարային կադրերի վերաբերյալ գրանցումները կատարվում են ըստ յուրաքանչյուր քաղաքի, բնակավայրի, իսկ դրանցում՝ ըստ յուրաքանչյուր մարդահամարի տեղամասի: Կադրերի ընդհանուր թվաքանակը պետք է համապատասխանի **Ձև 7Կ** ձևաթղթի 2, 6, 11 և 12-րդ սյունակներին:

18. «Բնակչության շրջանում զանգվածային բացատրական աշխատանքների կազմակերպման ծրագիր»՝ **Ձև 9Կ** ձևաթուղթը մարդահամարի անցկացման նպատակի, խնդիրների, անցկացման կարգի և ժամկետների մասին բնակչության շրջանում կատարվելիք բացատրական աշխատանքների բովանդակությունը, դրանց կատարման ժամկետները, ինչպես նաև նշվում է, թե ում կողմից են իրականացվում այդ աշխատանքները:

19. Կազմալանի բոլոր ձևերը, բացառությամբ **Ձև 1Կ**-ից լրացվում են երկու օրինակից: Կազմալանի լրացված ձևերը պետք է համեմատվեն քարտեզագրական նյութերի, տների (շինությունների) ցուցակների, գյուղական համայնքների ցուցակների հետ: Կազմալանի ձևերում լրացված տվյալները պետք է իրար հետ փոխկապակցված լինեն:

20. Քաղաքի և տարածաշրջանի համար կազմված կազմալանը հարկավոր է ներկայացնել քաղաքապետարանի կամ մարզպետարանի իրավասու

(կումպիտենտ) անձնակազմին՝ նախապես տեղեկացնելու համար աշխատանքների ծավալների, ժամկետների, անհրաժեշտ կադրերի և այլնի վերաբերյալ:

21. Կազմալանի երկու օրինակները, քարտեզագրական նյութերի հետ միասին, ներկայացվում են ՀՀ ԱՎԾ հաստատման: Կազմալանի հաստատումից հետո, հաստատված մեկ օրինակը, **Ձև 1Կ** ձևաթղթի և քաղաքի սխեմատիկ հատակագծի հետ վերադարձվում են ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային գործակալություններ:

Քաղաքների հրահանգչական և հաշվային տեղամասերի կազմը

Քաղաք/Վարչական շրջան-----Մարդահամարի տեղամաս -----Հրահանգչական տեղամաս-----

Հրահանգիչ-հսկիչ----- Հրահանգչական տեղամասի հասցեն-----

Հրահանգչական տեղամասի սահմանների նկարագրությունը-----

Հաշվային տեղամասի համարը	Հաշվարարի ազգանունը	Թաղամասի (գանգվածի) համարը, փողոցի, նրբանցքի, անցուղու և այլնի անվանումը	Տան (շինության) համարը	Կազմակերպության անվանումը, որին պատկանում է տունը (շինությունը) կամ սեփականատիրոջ ազգանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը	Բնակելի և ոչ բնակելի շինությունների քանակը	Դրանցում		Բնքնություն հաշվային տեղամաս չհանդիսացող, հրահանգչական տեղամասի մեջ մտնող մասնագիտացված տան և ժամանակավոր կացատեղ հանդիսացող հիմնարկի/կազմակերպության անվանումը և դրանցում առկա տեղերի քանակը
						բնակարանների քանակը	բնակչության թվաքանակը	
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.
ԸՆԴԱՄԵՆԸ					X			X

Քաղաքների մարդահամարի տեղամասի կազմը

Քաղաք/Վարչական շրջան-----Մարդահամարի տեղամաս -----Մարդահամարի տեղամասի վարիչ-----

Մարդահամարի տեղամասի հասցեն -----

Մարդահամարի տեղամասի սահմանների նկարագրությունը-----

1.	2.	3.	4. Հրահանգչական տեղամասի կազմում ըստ հիմնական հաշվային տեղամասի ընդգրկված են					9.	10.
			4.	5.	6.	7.	8.		
ԸՆԴԱՄԵՆԸ								X	

Քաղաքների մարդահամարային շրջանացում

(բացառությամբ մասնագիտացված տների և ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպությունների)

Քաղաք/Վարչական շրջան-----

Մարդահամարի տեղամասի համարը	Մարդահամարի տեղամասում				Կազմակերպվում են տեղամասեր		Միջին հաշվով հրահանգչական տեղամասում			Միջին հաշվով հաշվային տեղամասում		Գյուղական մարդահամարի տեղամասի կազմի մեջ մտնող քաղաքային բնակավայրերի համար նշել մարդահամարի տեղամասի համարը, իսկ հաշվային տեղամասերի համար՝ նաև հրահանգչական տեղամասի համարը	Մարդահամարի տեղամասի կազմի մեջ մտնող գյուղական հրահանգչական տեղամասերի քանակը
	տներ (շինություններ)	բնակելի և ոչ բնակելի տների (շինությունների) քանակը	բնակարաններ	բնակչություն	հրահանգչական	հաշվային	տներ (շինություններ) (սյունակ 2:6)	բնակչություն (սյունակ 5:6)	հաշվային տեղամասեր (սյունակ 7:6)	տներ (շինություններ) (սյունակ 2:7)	բնակչություն (սյունակ 5:7)		
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.	12.	13.	14.
							X	X	X	X	X	X	

Գյուղական վայրի մարդահամարի, հրահանգչական և հաշվային տեղամասերի կազմը

Մարզ ----- Տարածաշրջան-----

Մարդահամարի տեղամաս N -----Մարդահամարի տեղամասի վարիչ-----

Մարդահամարի տեղամասի հասցեն-----

Հրահանգչական տեղամասի համարը	Հրահանգչական տեղամասի հասցեն, Հրահանգիչ-հսկիչի ազգանուն, անուն, հայրանունը (գրվում է հաստատելուց հետո)	Գյուղական համայնքի, բնակավայրի հերթական համարը և անվանումը	Բնակչության թվաքանակը բնակավայրում	Հաշվային տեղամասի համարը	Բնակչության թվաքանակը հաշվային տեղամասում	Մասնագիտացված տուն և ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպությունների անվանումը և դրանցում առկա տեղերի քանակը
1.	2.	3.	4.	5.	6.	7.

Գյուղական վայրերի մարդահամարային շրջանացում
(բացառությամբ մասնագիտացված տների և ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպությունների)

Մարզ-----Տարածաշրջան-----

Մարդահամարի տեղամասի համարը	Մարդահամարի տեղամասում			Կազմվում են տեղամասեր		Միջին հաշվով մեկ հրահանգչական տեղամասում		Միջին հաշվով մեկ հաշվային տեղամասի բնակչության թվաքանակը	Քաղաքի մարդահամարի տեղամասի կազմի մեջ մտցված գյուղական վայրի հրահանգչական տեղամասի համար նշել այդ մարդահամարի տեղամասի համարը, հաշվային տեղամասի համար՝ նաև հրահանգչական տեղամասի համարը	Մարդահամարի տեղամասի կազմի մեջ մտնող հրահանգչական և հաշվային տեղամասերի համար՝ քաղաքի անվանումը և տեղամասերի քանակը
	գյուղական համայնքների քանակը	բնակավայրեր	բնակչություն	հրահանգչական	հաշվային	բնակչություն	հաշվային տեղամասեր			
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.

Մասնագիտացված տների (տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններ, մանկատներ, դպրոցներին կից գիշերօթիկներ և գիշերօթիկ դպրոցներ) և ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպությունների ցուցակ

Մարզ-----Տարածաշրջան-----

Հերթական համարը	Կազմակերպության/հիմնարկի անվանումը	Հասցեն	Մշտական բնակչության թվաքանակը	Տեղերի քանակը	Տեղամասերի համարները		
					մարդահամարի	հրահանգչական	հաշվային
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.
ԸՆԴԱՄԵՆԸ							

Մարդահամարային կադրերի պահանջարկ

Մարզ-----Տարածաշրջան-----

Քաղաքների անվանումը, գյուղական վայրերում՝ մարդահամարի տեղամասի համարը	Մարդահամարի տեղամասերի վարիչներ և նրանց օգնականներ	Հրահանգիչ-հսկիչներ				Հաշվարարներ					Ընդամենը անհրաժեշտ են մարդահամարային կադրեր (սյունակներ 2+6+11)
		հիմնական քանակակազմ	ռեզերվ	մասնագիտացված տներում և ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպություններում	ընդամենը	հիմնական քանակակազմ	ռեզերվ	այդ թվում՝ վճարվող	մասնագիտացված տներում և ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպություններում	ընդամենը	
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.	12.

Հրահանգիչ-հսկիչների և հաշվարարների (ներառյալ ռեզերվը) ուսուցման (հրահանգավորման) և նրանց պատրաստվածության ստուգման ծրագիր

Մարզ-----Տարածաշրջան-----

Մարդահամարի տեղամասի համարը	Հրահանգավորվողների կատեգորիաները	Խմբի համարը	Խմբում մասնակիցների քանակը	Հրահանգավորման օրերը	Հրահանգավորումն անցկացնելու վայրը	Ով է անցկացնում հրահանգավորումը
1.	2.	3.	4.	5.	6.	7.

Բնակչության շրջանում զանգվածային-բացատրական աշխատանքների կազմակերպման ծրագիր

Մարզ-----Տարածաշրջան-----

Հերթական համարը	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողները
1.	2.	3.	4.